

ՄՈՎԱԿՍ ԽՈՐԵՆԱՑՈՒ ՅԻՇԱՏԱԿԱԾ ՄԻ ՔԱՆԻ ՊԱՏՄԻՉՆԵՐԻ ՄԱՍԻՆ (ԲԵՐՈՍՈՍ, ԱԼԵՔՍԱՆԴՐ ԲԱԶՄԱՎԷՊ, ԱԲԻԴԵՆՈՍ ԵՒ ԿԵՖԱԼԻՈՆ)

ԱՐԱՍ ԹՈՓՉԵԱՆ

Մովսէս Խորենացու «Հայոց պատմութեան» ուսումնասիրման ամենակարեւոր ու միաժամանակ վիճաբարոյց ուղորտներէն մէկը նրա օգտագործած աղբիւրներն են՝ առնչուող բոլոր տարաբնոյթ առեղծուածներով հանդերձ: Բազմաթիւ դեռեւս պատասխանի կամ առնուազն անկանխակալ, ճշմարտանման մեկնաբանութեան սպասող հարցեր կան, որոնք վերաբերում են նրա հաղորդած տեղեկութիւնների արժանահաւատութեան խնդրին, դրանց իրական կամ «մտացածին» աղբիւրներին, հայ եւ օտարազգի հեղինակներից Խորենացու քաղած տուեալներն իր սեփական շարադրանքի համատեքստում ներկայացնելու նրա մեթոդաբանութեանն ու սկզբունքներին, այս կամ այն աղբիւրից ուղղակիօրէն կամ անուղղակիօրէն օգտուած լինելու հանգամանքներին եւ այլն: Աղբիւրագիտական խնդիրների լուսաբանումից է, վերջին հաշուով, մեծապէս կախուած նաեւ պատմագրի ապրած ժամանակի շուրջ հարկերամեակից աւելի շարունակուող բանավէճի լուծումը:

«Հայոց պատմութեան» աղբիւրների հետազոտման կարեւորութիւնն օրինաչափ է, քանի որ Խորենացին, յանձն առնելով իր գրքում ընդգրկել Հայաստանի լիակատար պատմութիւնը՝ սկսած ամենավաղեմի իրադարձութիւններից, միջնադարեան հայ պատմագիրներից ամէնից շատն է կարիք ունեցել անցեալի մասին պատմող արժանահաւատ աղբիւրների եւ բնականաբար կանգնել մեծագոյն դժուարութիւնների առաջ մի երկրում, որտեղ, Ստ. Մալխասեանցի խօսքերով, «գիրքն ընդհանրապէս հազուադիւս մի բան

էր»¹: Նման սուղ պայմաններում էլ, այնուամենայնիւ, նա կարողացել է իր շարադրանքը կառուցել այնպիսի հարուստ պատմագրական նիւթի վրայ, որ նրա «յիշած եւ չյիշած» աղբիւրները, Ստ. Մալխասեանցի հաշուարկով, քառասունից աւելի են²:

Խորենացիագիտութեան երկարամեայ փորձը, արտայայտուած բազմաթիւ, յաճախ՝ տրամագծօրէն ներհակ կարծիքներն ու այլեւայլ ծայրայեղութիւնները ցոյց են տուել, որ աղբիւրագիտութիւնն այս դէպքում պահանջում է միանգամայն առանձնայատուկ, ոչ տրագիցիոն չափանիշերի վրայ հիմնուած մօտեցում, այլապէս հետազօտողները յանգում են կա՛մ կատեգորիկ քննադատութեան ու ժխտման, կա՛մ էլ, որպէս դրա անմիջական հակադրեցութիւն, անվերապահ ընդունման այն ամէնի, ինչ ասում է «պատմահայր» Մովսէսը: Զուտ բանակառութիւնն ու առողջ տրամաբանութիւնը, հին պատմագրութեան ուսումնասիրման ու գնահատման սովորական, ընդունուած սկզբունքների հետ մէկտեղ չեն կարող լինել այն գլխաւոր ուղեցոյցը, որով պէտք է առաջնորդուեն մասնագէտները, աղբիւրների Խորենացու վկայակոչումներն ու դրանցից նրա օգտուելու եղանակները քննելիս: Նրա «Պատմութիւնն» առհասարակ չափազանց իւրօրինակ, պատմագրական ուրիշ երկերից էապէս տարբերուող գրուածք է, որի բովանդակութիւնը վերլուծելիս անհրաժեշտ են հետազօտման նոյնքան իւրայատուկ մեթոդներ, եւ սա վերաբերում է յատկապէս աղբիւրագիտական հարցերին:

Յստակեցման եւ նոր տեսանկիւնից

մեկնաբանման կարիք ունեցող բազում հարցականներ կապուած են Խորենացու «յունական» աղբիւրների հետ, որոնց կենտրոնական նշանակութիւնն իր երկում չի յայտարարւում շեշտել ինքը՝ հեղինակը, «Պատմութեան» առաջին խսկ էջերում: Նա Սահակ Բագրատունուն խոստանում է գրել Հայաստանի բոլոր նախարարութիւնների ազգաբանութիւնը՝ պատմելով ամէն մէկի որտեղից եւ ինչպէս ծագելը, «որպէս ի յունականս օմանս կայ ի պատմութիւնս»³ (I, 1): Յջորդ գլխում նա հիմնաւորում է իր ընտրութիւնը. թէպէտ «Պարսից եւ Քաղղէացոց» մատենագիրներն աւելի շատ յիշատակութիւններ ունեն հայերի մասին, այդուհանդերձ ինքը նախընտրում է «զՅունացն զպատմագիրս», քանի որ յոյն թագաւորները հոգ են տարել ոչ միայն յոյներին աւանդելու «իմաստութեան» եւ իրենց աշխարհակալութեան մասին գրուածքներ, այլեւ յունարէնի թարգմանելու «զամենայն ազգաց զմատեանս» (I, 2): Այսպէս Խորենացին ընդգծում է հին յունական մատենագրութեան աւելի համապարփակ՝ իր համար նախընտրելի բնոյթը: Գլուխը եզրափակուած է հանրայայտ նախադասութեամբ, երբ պատմագիրն ամբողջ Յունաստանը կոչում է «մայր կամ դայեակ իմաստից»: «Յունական» ասելով՝ Խորենացին ի նկատի ունի յունալեզու երկեր՝ անկախ դրանց հեղինակների ազգային պատկանելութիւնից: Այդպիսի աղբիւրների պատմական տուեալներ կամ, իր գրքի լեզուն առաւել հարստացնելու նպատակով, ոճական դարձուածներ նա օգտագործել է «Հայոց պատմութեան» շարադրման գրեթէ ողջ ընթացքում. եւ հէնց «յունական» աղբիւրներն են, որ, սկսած 19-րդ դարի երկրորդ կէսից, առաւել շատ հիմքեր են տուել Խորենա-

ցուն քննադատելու՝ ի վերջոյ պատճառ դառնալով նաեւ նրան իր ժամանակից տեղաշարժելուն:

Պատմիչի «յիշած» յունական աղբիւրների վերաբերեալ (որոնցից յատկապէս հետաքրքրական, երբեմն՝ հանելուկային հանգամանքներ են կապուած Բերոսոսի, Ալեքսանդր Բազմավէպի, Աբիդենոսի, Կեֆալիոնի, Յուլիոս Աֆրիկանոսի, Յովսէպոս Ֆլաւիոսի, Եւսեբիոս Կեսարացու, Մանեթոսի, Պոլիկրատեսի, Եւագորասի, Սկամանդրոսի, Ֆլեգոնի, Արիստոն Պելլացու եւ Ֆիրմիլիանոս եպիսկոպոսի յիշատակման հետ) մասնագիտական գրականութեան մէջ վճռորոշ է եղել գերմանացի խոշոր արեւելագէտ Ալֆրեդ Փոն Գուտշմիդի կարծիքը: Իրեն յատուկ խորաթափանց քննութեամբ եւ սրամիտ, դիպուկ դատողութիւններով գիտնականը գրեթէ զրոյի է հաւասարեցրել ինչպէս Խորենացու վկայակոչումների ու մէջբերումների, այնպէս էլ այդ աղբիւրներից վերցուած տեղեկութիւնների պատմագիտական արժէքը՝ միաժամանակ բացայտելով հայ պատմիչի «խարդախութիւններ» ու հնարանքներ⁴: Հետագայում ուսումնասիրողների մեծ մասը կա՛մ շատ հարցերում Գուտշմիդի հետ համամիտ են գտնուել, կա՛մ էլ նրա դրած հաստատուն հիմքի վրայ աւելացրել նոր քննադատական մանրամասներ, եւ Խորենացու յիշատակած յունական աղբիւրների վերաբերեալ նրա մի շարք եզրայանգումներ մինչեւ այսօր պահպանում են իրենց «վերջին խօսքի» արժէքը:

Մենք զանազան առիթներով փորձել ենք անդրադառնալ նման վիճելի խնդիրների եւ հնարաւոր լուծումներ առաջարկել՝ միաժամանակ ուշադրութիւն հրաւիրելով տարբեր հեղինակներից տեղեկութիւններ քաղելու եւ դրանք ներկայացնելու այն ինքնատիպ ձեւերի վրայ,

որոնք բնորոշ են խորենացուն, եւ որոնք հաշուի առնելու դէպքում կարող են վերանայուել ու վերագնահատուել «Հայոց պատմութեան» մի շարք՝ «անբարեկամ» վերաբերմունքի արժանացած կամ անհասկանալի հատուածներ⁵:

Ուզում ենք դարձեալ, հնարաւորին չափ հանգամանօրէն եւ ուսումնասիրուած ծաւալուն նիւթի ընդգրկումով, անդրադառնալ յունալեզու չորս պատմագիրներին՝ Բերոսոսի, Ալեքսանդր Բազմավէպի (Պոլիհիստոր), Աբիդենոսի եւ Կեֆալիոնի վկայակոչմանը Մովսէս Խորենացու «Հայոց պատմութեան» մէջ⁶:

Դրանք առաջին իսկ «յունական» գրուածքների հեղինակներն են, որոնց նա յիշում է, աղբիւրների նշուած ընտրութիւնը կատարելուց յետոյ: Բերոսոսը յիշատակում է երկու անգամ. առաջին յիշատակութիւնն աւելի ծաւալուն է (I, 2), իսկ երկրորդ դէպքում (I, 4) Խորենացին միայն Բերոսոսի անունն է տալիս այն հեղինակների շարքում, որոնց գրածները տարբերում են Աստուածաշնչից. այստեղ է նաեւ Ալեքսանդր Բազմավէպի միակ եւ Աբիդենոսի առաջին յիշատակումը: Վերջինս հանդէս է գալիս եւս երկու անգամ (I, 5 եւ II, 8), երբ Խորենացին նրանից մէջբերումներ է կատարում: Կեֆալիոնի առաջին վկայակոչումը եւ նրա երկրորդ «գլուխներից մէկից» քաղուածքը I, 5 գլխում է: Երկրորդ անգամ (I, 18) Խորենացին նշում է Շամիրամին վերաբերող դէպքերի յաջորդականութիւնն ըստ Կեֆալիոնի, որի հետ չի համաձայնում: Այս յիշատակումներին մէկ առ մէկ կը վերադառնանք ստորեւ, իսկ մինչ այդ նախ անհրաժեշտ ենք համարում կարճ տեղեկութիւններ տալ յիշեալ չորս հեղինակների մասին:

Բաբելացի Բերոսոսը (Βηρωσ(σ)ός) եղել է Բել աստծոյ քուրմը Բաբելոնում,

ապրել է Սելեւկեան թագաւոր Անտիոքոս I Սոտերի (մ.թ.ա. 281–261 թթ.) օրօք, որին նուիրել է երեք գրքից բաղկացած իր յունարէն պատմութիւնը: Այդ երկը յիշատակում է «Բաբելոնականք» (Βαβυλωνιακά) կամ «Քաղդէականք» (Χαλδοϊκά) վերնագրով, որից միայն հատուածներ են պահպանուել: Առաջին գրքում Բերոսոսը պատմել է արարչագործութեան մասին, մինչեւ ջրհեղեղ, երկրորդում դէպքերն աւարտուել են Նաբոնասար թագաւորի գահակալութեամբ (մ.թ.ա. 747) եւ երրորդում՝ Ալեքսանդր Մակեդոնացու մահով (մ.թ.ա. 323): Բերոսոսը հին աշխարհում հռչակաւոր է եղել (յատկապէս շնորհիւ այն փաստի, որ նրա միջոցով Բաբելոնի պատմութիւնը եւ «քաղդէացիների»⁷ աստղաբաշխութեան բնագաւառում ձեռք բերած գիտելիքները փոխանցուել են հելլենիստական աշխարհ). նրա գիրքը բազմիցս օգտագործուել է որպէս սկզբնաղբիւր⁸:

Ալեքսանդր Բազմավէպը ('Αλεξάνδρος ὁ Πολύστορος), ծագումով Միլետոս քաղաքից, ծնուել է մօտ մ.թ.ա. 105 թ.: Յայտնի է, որ նա որպէս ռազմագերի բերուել է Հռոմ, եւ մ.թ.ա. 82 թ. Սուլլան նրան ազատութիւն է շնորհել: Մահացել է իր տանը բռնկուած հրդեհի ժամանակ⁹: Բացառիկ բեղմնաւոր հեղինակ է եղել ըստ «Սուրիդասի». նրա գրուածքների քանակը «հաշուից դուրս» (ἀριθμοῦ κρείττω) էր (այստեղից էլ՝ նրա «Բազմավէպ» մականունը): Նա հաղորդել է պատմական, ազգագրական, աշխարհագրական տեղեկութիւններ հին աշխարհի գրեթէ բոլոր երկրների ու ժողովուրդների մասին: Մեզ հասել են Բազմավէպի գրուածքներից հետագայ հեղինակների կատարած բազմաթիւ մէջբերումներ¹⁰:

Աբիդենոսը ('Αβυδηνός) մեզ հետաքրքրող չորս հեղինակներից առաւել

քիչ յայտնին է, նրա մասին կենսագրական տեղեկութիւններ չկան¹¹: Ենթադրուած է, որ ապրել է մ.թ. II դարում: Նրա կորած երկից հատուածներ են պահպանուել հիմնականում Եւսեբիոս Կեսարացու «Ժամանակագրութեան» եւ «Աւետարանական պատրաստութեան» (Praeparatio Evangelica¹²) մէջ: Կեսարացի եպիսկոպոսը նրա գիրքն անուանում է «Ասորեստանցիների մասին գրուածք» (ἡ περὶ Ἀσσυρίων γράφη) (PE, IX, 41, 456): Եւսեբիոսի մէկ ուրիշ վկայութիւնից (PE, IX, 12, 414) ենթադրուած է, թէ նա գրել է նաեւ Մարաստանի մասին (τὰ Μηδικά)¹³:

Կեֆալիոնն (Κεφαλίων) ապրել է Ադրիանոս կայսեր օրօք, մ.թ. I–II դարերում: Գտնուելով Սիկիլիայում՝ նա գրել է ինը գրքից (կոչուած Մուսաների անուններով) բաղկացած յունարէն մի պատմութիւն (Ասորեստանի թագաւոր Նինոսի ժամանակաշրջանից մինչեւ Ալեքսանդր Մակեդոնացի), որից մեզ հասել են միայն հատուածներ, գլխաւորապէս՝ Եւսեբիոս Կեսարացու, Յովհաննէս Մալալասի եւ Գէորգիոս Սինկլլոսի միջոցով¹⁴: Կեֆալիոնի մասին պահպանուած կենսագրական տուեալներին առիթ կ'ունենանք անդրադառնալու նաեւ ստորեւ:

Այս հեղինակների՝ Խորենացու վկայակոչումների առնչութեամբ Ա. Փոն Գուտշմիդի եզրայանգումը կտրուկ եւ որոշակի է. նրանց անունները, համապատասխան մէջբերումներով հանդերձ, «առանց բացառութեան» ("ohne Ausnahme") վերցուած են Եւսեբիոսի «Ժամանակագրութիւնից»¹⁵ (ինչպէս հետագայում բաւացի գուգահեռների հիման վրայ ճշգրտեցին բանասէրները՝ այդ երկի հայերէն թարգմանութիւնից), այսինքն՝ անգամ Կեսարացի եպիսկոպոսի գրքում բա-

ցակայող տուեալներն աղբիւրագիտական տեսանկիւնից անարժէք են. դրանք պարզապէս յօրինուած են նոյն «Ժամանակագրութեան» օգնութեամբ: Այնուհետեւ յիշեալ պատմագիրներին անդրադարձած գրեթէ բոլոր խորենացիագէտները կրկնել են նրա կարծիքը: Այդպէս են մտածել Գ. Զարպէանալեանը¹⁶, Գր. Խալաթեանը¹⁷ եւ Ա. Զամինեանը¹⁸: Ստ. Մալխասեանցը գրում է, թէ Խորենացին «յիշում է... Բեռոսոս Քաղդէացուն, Աղեքսանդր Բազմավէպին, Աբիդենոսին, Կեֆալիոնին, որոնց նա ծանօթ է Եւսեբիոսի ժամանակագրութեան միջոցով եւ ոչ անմիջապէս»¹⁹: Նոյնն է ասում Մ. Աբեղեանը. «Բերոսոս, Աբիդենոս, Բազմավէպ, Կեֆալիոն... այդ հին նշանաւոր պատմագիրների գրուածքներն, ինչպէս երեւում է, Խորենացին ձեռքի տակ չի ունեցել, այլ օգտուել է Եւսեբիոս Կեսարացու «Քրոնիկոնից», որովհետեւ ինչ որ նա բերում է, կայ այս գրքի մէջ»²⁰: Ռ. Թոմսոնը նշում է, որ Խորենացու «Պատմութեան» մէջ «Բազմավէպն ու Արիոսը վերցուել են Եւսեբիոսից. Կեֆալիոնը յիշատակուած է դարձեալ Եւսեբիոսի միջոցով (I, 5, 18)»: Նոյնը նա գրում է Բերոսոսի ու Աբիդենոսի մասին²¹: Հարցի վերաբերեալ այլ չէ նաեւ Գ. Սարգսեանի²² եւ Ա. ու ժ. Պ. Մահէների կարծիքը²³:

Նման մօտեցումը²⁴ ճիշտ չէ նախ այն առումով, որ յիշեալ հեղինակները դիտուում են իրարից անբաժան՝ որպէս մէկ ամբողջութիւն՝ կապուելով նոյն սկզբնաղբիւրի՝ Եւսեբիոսի «Ժամանակագրութեան» հետ: Մինչդեռ նրանցից իւրաքանչիւրի վկայակոչումն ուղեկցուած է միւսներից տարբեր հանգամանքներով, որոնք առանձին-առանձին քննելու անհրաժեշտութիւն կայ:

Առաջինը յիշատակում է Բերոսոսը

(I, 2): Խալաթեանցը փորձել է Գուտշմի-
դի դիտարկումն աւելի հիմնաւորել՝
կողք-կողքի ներկայացնելով Խորենացու
«Պատմութեան» եւ Եւսեբիոսի «Ժամա-

Խորենացի

...Այլ եւ բազում արք անուանիք եւ
իմաստութեամբ պարապեալք ի Յունաց
աշխարհէն հոգացան՝ ոչ միայն զգիր
դիւանաց այլոց ազգաց թագաւորաց եւ
զմեհներից յեղուլ ի յոյն բան, որպէս
գտանեմք զայն, որ եւ զԲիւղիոս ոմն
յայտ յորդորեաց այր Քաղդէացի եւ վարժ
ամենայն իմաստութեամբ, այլ եւ զմեծա-
մեծս եւ զգարմանալոյ արժանաւորս յա-
րուեստից ուրեք ուրեք գտեալ աշխատու-
թեամբ, հաւաքեալ փոխեցին ի յոյն լեզու,
որպէս զԱ(ստեղաբաշխութիւն) առ Քաղ-
դէացիս եւ զԵ(րկրաչափութիւն) առ Ե-
գիպտացիս եւ զԹ(ուականութիւն) առ
Փիւնիկեցիս եւ զԵ(րաժշտութիւն) առ
Թրակացիս²⁷:

Եթէ ուշադիր նայենք ընդգծուած
բառերին, ապա կը համոզուենք, որ
կրկնուում են միայն «այր քաղդէացի» եւ
«ի յունաց լեզու» (Խորենացու մօտ՝ «ի
յոյն լեզու») արտայայտութիւնները: Խա-
լաթեանցի նշած միւս գուգահեռները, ի-
մաստով բոլորովին տարբեր նախադա-
սութիւններում («զգիր դիւանաց այլոց
ազգաց թագաւորաց» – «յորս կայ բա-
զում միաբանութիւն եւ առ այլ եւս մեր
գիրս», «վարժ ամենայն իմաստութեամբ» –
«յամենեսիս որք զխրատու եւ զիմաստու-
թեամբ գային» կամ՝ «ի Քաղդէից ճար-
տարութիւն իմաստութեան պատմէր»), հե-
ռու են համոզիչ թուալուց: «Այր Քաղ-
դէացի» արտայայտութիւնը, որի վրայ,
իբրեւ Եւսեբիոսից փոխառութիւն, ուշադ-
րութիւն է դարձնում նաեւ Թոմասը²⁸,
հին յունական եւ հայ գրականութեան
մէջ այնպիսի սովորական մի կաղապարի

նակագրութեան»²⁵ հայերէն թարգմանու-
թեան համապատասխան տողերը²⁶: Ահա
դրանք՝ ըստ Խալաթեանցի.

Եւսեբիոս

Ճառեցից, ասէ, այժմիկ զառ ի
Քաղդէացուց մի ըստ միոջէ զմէնջ գր-
եալսն եւ զպատմեալս. յորս կայ բազում
միաբանութիւն եւ առ այլ եւս մեր գիրս:
Եւ վկայ այսոցիկ Բերոսոս է՝ այր Քաղ-
դէացի յազգէ եւ երեւելի յամենեսիս որք
զխրատու եւ զիմաստութեամբ գային.
քանզի եւ զաստեղագիտութեանն մա-
տեանս, եւ որ ինչ ի Քաղդէից ճարտա-
րութիւն իմաստութեան պատմէր, նա Ե-
հան ի յունաց լեզու:

օրինակ է, որ կարող է վերցուած լինել
ցանկացած ուրիշ աղբիւրից²⁹: Բաւական
է ասել, որ Բերոսոսը հետագայ յունա-
կան տեքստերում յիշուում է մերթ որպէս
«այր բաբելացի» (անդր Βαβυλωνιος),
մերթ՝ «այր հմտագոյն» (անդր ἱκανώ-
τατος), մերթ էլ հէնց նոյն՝ «այր քաղ-
դէացի» (անդր Χαλδαίος) ձեւով³⁰: Նոյն-
պիսի՝ յաճախ հանդիպող արտայայտու-
թիւն է՝ «ի յոյն (յունաց) լեզու» (հմմտ.,
օրինակ, Փիլոնի «Մովսէսի կեանքի մա-
սին»-ում³¹ (II, 31). εἰς Ἑλλάδα γλώτ-
ταν), որ միայն Խորենացու «Պատմու-
թեան» այս նոյն գլխում կարդում ենք
եւս երկու անգամ («Պողոմէոսն... զմա-
տեանս եւ զվէպս ի յոյն լեզու փոխար-
կեաց» («Պողոմէոսն») ի յոյն լեզու աշխա-
տութիւն իւր ժողովեաց») եւ մէկ անգամ
էլ՝ փոքր-ինչ այլ ձեւով. «ի յոյն բան»:

Բաբելացի պատմագրի անունը «Ժա-

մանակագրութեան» հայերէն թարգմա-
նութեան մէջ գործածուած է ճիշտ տա-
ռադարձմամբ՝ «Բերոսոս», մինչդեռ Խո-
րենացու «Պատմութեան» ոչ մի ձեռա-
գրում այդ անուան տառադարձումը
ճիշտ չէ. առկայ են հետեւեալ ա-
ղաւաղուած ձեւերը՝ «Բիււոս», «Բիւ-
ոիոս», «Բեւոիոս», «Բերիոս»: Տառա-
դարձման նոյն սխալ տարբերակներն ենք
ձեռագրերում գտնում նաեւ Բերոսոսի
անուան յիշատակման երկրորդ դէպքում
(I, 4)³²:

Սոյն գլխում Խորենացին շարադրում
է Յունաստանի, յունական մշակոյթի մա-
սին տարիներ ընթացքում ձեռք բերած
իր ընդհանուր գիտելիքները, պատկերա-
ցումները: Եթէ «Ժամանակագրութեան»
համապատասխան հատուածում (ի դէպ,
մէջբերուած Յովսէպոս Յիււեոսի «Ընդ-
դէմ Ապիոնի» (I, 128–129) երկից) խօս-
ւում է կոնկրետ Բերոսոսի մասին, որը
յունարէն էր թարգմանել քաղդէացիներ
կոնկրետ աստղագիտական եւ իմաստասի-
րական մատեանները, ապա Խորենացու
պատմածն առաւել ընդհանուր բնոյթ ու-
նի. յոյն իշխանաւորների ու գիտնական-
ների մշակութային գործունէութեան,
տարբեր ժողովուրդների «արուեստների»
յունարէն թարգմանութեան ընդհանուր
երեւոյթի շրջանակում Բերոսոսի կատա-
րածը շեշտուում է միայն որպէս մաս-
նաւոր օրինակ:

Ուշագրաւ է հետեւեալ փաստը: Եւսե-
բիոսի «Ժամանակագրութեան» Բերոսոսի
մասին պատմող հատուածներից մէկը
պահպանուել է նաեւ յունարէն, շնորհիւ
VIII-IX դդ. ժամանակագիր Գէորգիոս
Սինկելլոսի³³ (P. 28, B): Համեմատութիւ-
նը ցոյց է տալիս, որ այն սխալ է թարգ-
մանուած (Եւսեբիոսն իր հերթին հա-
տուածը վերցրել է Ալեքսանդր Բազմա-
վէպից): Հայերէն եւ յունարէն գուգա-

հեռն այսպիսին է.

«Բերոսոս բայ ասէ յառաջնում բա-
բելոնական մատենին՝ լինել նմա ի տիս
Աղեքսանդրի Փիղիպեայ, եւ գրել բազ-
մաց մատեանս, որ եւ ի Բաբելոնի բա-
զում զգուշութեամբ պահէին յերկերիւր
եւ ի հնգետասան բիւրուց ամաց. յորում
թիւք ժամանակաց, եւ զիր պատմու-
թեանց զերկնից եւ զերկրէ եւ զծովէ եւ
զնախակերտն արարչութենէ, եւ զթագա-
ւորաց եւ զնոցուն իրաց եւ զգործոց
պատմէ»³⁴ – Βήρωσσοσ δὲ ἐν τῇ πρώτῃ
τῶν Βαβυλωνιακῶν φησι γενέσθαι μὲν
αὐτὸν κατὰ Ἀλέξανδρον τὸν Φιλίππου
τὴν ἡλικίαν. Ἀναγραφὰσ δὲ πολλῶν ἐν
Βαβυλῶνι φυλάσσεσθαι μετὰ πολλῆσ
ἐπιμελείασ ἀπὸ ἐτῶν που ὑπὲρ μυριάδων
ιε΄ περιεχοῦσασ χρόνον· περιέχειν δὲ τὰς
ἀναγραφὰσ ἱστορίας περὶ τοῦ οὐρανοῦ
καὶ θαλάσσης καὶ πρωτογονίας καὶ βα-
σιλέων καὶ τῶν κατ' αὐτοὺσ πράξεων³⁵.

Հայ թարգմանիչը հասկացել է, թէ
Բերոսոսն ինքն էր գրել այն «շատերի
գրուածքները» («զբազմաց մատեանս»,
որ երեւի նա ընկալել է իբրեւ «բազմա-
թիւ մատեաններ»), որոնք գտնուում էին
Բաբելոնում. այնուհետեւ ստացուում է,
թէ Բերոսոսի գրածները պահուում էին
այնտեղ «տասնհինգ բիւր» տարի (չգի-
տես ինչու, նաեւ աւելացուած է «յերկե-
րիւր» բառը): Մինչդեռ յունարէնում
նշուած է, թէ շատ հեղինակների երկեր,
որ ընդգրկում էին տասնհինգ բիւր
տարուայ ժամանակաշրջան, պահուում էին
Բաբելոնում: Սա հաստատուում է Սինկել-
լոսի «Ժամանակագրութեան» նոյն
փաստն արտացոլող մէկ ուրիշ հա-
տուածով (P. 14, B), որտեղ պատմուում է,
թէ Բերոսոսը, «գտնելով Բաբելոնում
խնամքով պահուող շատերի գրուածքնե-
րը, որոնք ընդգրկում էին գրեթէ տասն-
հինգ բիւր տարի» (εὐρών ἐν Βαβυλῶνι

ինչպէս արդէն նշուեց, թէ մարաբասեան մատեանում մէջըբերուած է եղել այդ անունների թուարկումն ըստ Աբիդենոսի, որից յետոյ այն կրկնել է «ժամանակագիրը»: Նման կրկնութեան մէկ ուրիշ դէպք հանդիպում է «Հայոց պատմութեան» հէնց նոյն հատուածներում. «Սիրիլայ. Յառաջ քան զբուրգն, ասէ... գրում է Խորենացին, - Զրուանն եւ Տիտանն եւ Յապետոսթէ լինէին իշխանք երկրի» (I, 6) (Հմմտ. յունարէն բնագրում. καὶ βασιλευσε Κρόνος καὶ Τιτᾶν Ἰαπετός τε): Ապա նա յայտնում է, թէ նոյն նախադասութեամբ սկսուել է մարաբասեան մատեանը (I, 9). «Այս մատեան... որոյ սկիզբն լեալ ասէ զԶրուանն եւ զՏիտանն եւ զՅապետոսթէ»:

Որ Աբիդենոսը կարող էր իր գրքում ընդգրկած լինել հայկական մի «ազգաբանութիւն», կարելի է ենթադրել նրա կողմից Ալեքսանդր Բագմավէպի տեղեկութիւնների լայնօրէն օգտագործման փաստի հիման վրայ: Վերջինիս վերաբերող կենսագրական տուեալներում յատկապէս շեշտուում է, որ նա իր երկերում գրել է հին աշխարհի գրեթէ բոլոր երկրների ու ժողովուրդների մասին: Թուարկենք նրա գրքերի՝ մեզ հասած վերնագրերից մի շարք¹⁰³. «Քաղղէականք» եւ «Ասուրականք» (Χαλδαϊκά καὶ Ἀσσυριακά), «Հրեաների մասին» (Περὶ Ἰουδαίων), «Իտալականք» («Հռոմի մասին») (Ἱταλικά (Περὶ Ῥώμης)), «Կրետականք» (Κρητικά), «Եւքսինեան Պոնտոսի մասին» (Περὶ Εὐξεινου πόντου), «Բիւթանիայի մասին» (Περὶ Βιθυνίας), «Պաֆլագոնիայի մասին» (Περὶ Παφλαγονίας), «Փոնդիայի մասին» (Περὶ Φρυγίας), «Կարիայի մասին» (Περὶ Καρίας), «Լիկիականք» (Λυκικά), «Կիլիկիայի մասին» (Περὶ Κιλικίας), «Կիպրոսի մասին» (Περὶ Κύπρου), «Հնդկականք» (Ἰν-

δικά), «Ասորիքի մասին» (Περὶ Συρίας), «Եգիպտականք» (Αἰγυπτιακά), «Լիբիականք» (Λιβυκά) եւ այլն: Պէտք է կարծել, որ Պոլիհիստորի ուշադրութիւնից չեն վրիպել նաեւ Հայաստանն ու հայերը, որոնք յիշատակուում են ուրիշ երկրների մասին մեզ հասած հատուածներում¹⁰⁴: Ընդ որում յստակ է, որ տարբեր ժողովուրդների անդրադառնալիս նա հաղորդել է մանրամասն ծագումնաբանական տեղեկութիւններ՝ հօրից որդի թուարկելով տուեալ երկրի նախնիներին¹⁰⁵, եւ պատմել առասպելական բազմաթիւ դրուագներ: Այդպիսի «ազգաբանական» ցանկեր ներկայացնելը, այլեւ առասպելականի ու իրականի միաձուլումը, ինչպէս պարզ երեւում է առկայ հատուածներից, առհասարակ յատուկ էին մեզ հետաքրքրող բոլոր չորս հեղինակներին՝ Բերոսոս¹⁰⁶, Ալեքսանդր Բագմավէպ, Աբիդենոս, Կեֆալիոն:

Այս հանգամանքները նոյնպէս ամրապնդում են Խորենացու խօսքերի խկութիւնը, թէ՛ «Արայն գեղեցիկ՝ Արամայ, Հարմայ, Գեղամայ, Ամասեայ, Արամայիսայ, Արամանեկայ, Հայկայ» գրել է Աբիդենոսը (հաւանաբար օգտագործելով այդ անունների յունականացուած համարժէքները)՝ «յիւրում առաջնում առանձնականի իմն մանր ազգաբանութեան»:

Ուշագրաւ է Կեֆալիոն պատմիչի առաջին յիշատակումը (I, 5), որին հետեւում է նրա կորած «Պատմութիւնից» մէջըբերումը: Կեֆալիոնի մասին այս վկայութեան վերաբերեալ նոյնպէս խորենացիագէտների համար, մինչեւ համեմատաբար վերջերս, անհերքելի է եղել Գուտշմիրի կարծիքը: Կոնկրետ փաստարկներ բերելով՝ նա անվաւերական է համարել Խորենացու մէջըբերած հատուածը՝ եզրակացնելով, որ Մովսէսն այն հնարել է Ե-

սերիոսի «ժամանակագրութեան» մի նախադասութեան (որը նոյնպէս քաղուածք է Կեֆալիոնի գրքից) օգնութեամբ¹⁰⁷: Այս պատճառով Յ. Յակոբին հին յունական պատմագրութեան՝ պահպանուած հատուածների իր հրատարակութեան մէջ¹⁰⁸ (եւ այլուր¹⁰⁹) Գուտշմիրի հետեւութեամբ Խորենացու մէջըբերումը Կեֆալիոնի գրուածքից համարել է կեղծիք (ի տարբերութիւն նմանատիպ նախորդ ժողովածուի՝ Fragmenta Historicorum Graecorum-ի հրատարակիչ Կ. Միւլլերի, որ, այլ հեղինակների քաղուածքների հետ հաւահայացրել է նաեւ Խորենացունը՝ որպէս կայացրել է նաեւ Խորենացունը՝ որպէս Կեֆալիոնի շարադրանք¹¹⁰): Մինչդեռ, ինչպէս կը տեսնենք ստորեւ, գերմանացի փաստարկները, առաջին հայացքից տրամաբանական թուալով հանդերձ, իրականում ընդունելի չեն եւ չեն տալիս խնդրի լուծման բանալին:

Վերեւում միւս երեք պատմագիրների հետ նաեւ Կեֆալիոնի վերաբերեալ մենք նշեցինք, թէ ինչպէս են մասնագէտները կրկնել Գուտշմիրի կարծիքը: Աւելացնենք եւս մի քանի մէջըբերում: Ստ. Մալխասեանց. «Կեֆալիոնին յիշում է Եւսեբիոս Կեսարացին եւ նրանից քաղուածքներ անում: Խորենացին էլ՝ Եւսեբիոսից»¹¹¹: Ա. եւ Ժ.-Պ. Մահէները նոյնիսկ ծանօթագրում են, թէ Կեֆալիոնի՝ մեզ հետաքրքրող «հատուածը մէջըբերուած է Եւսեբիոսի «ժամանակագրութեան» մէջ»¹¹² («Ce passage... est cité dans la Chronique d'Eusebe»): Մասնագէտներն անուշադրութեան են մատնել դեռ Գուտշմիրից տասնամեակներ առաջ Վ. Լանդուլայի արած դիտողութիւնը, թէ Խորենացու քաղուածքը Եւսեբիոսի «ժամանակագրութիւնից» անկախ է¹¹³: Զ. Տրայխնան 1991 թ. հրատարակած իր գրքում դեռեւս չի կասկածում, որ Խո-

րենացին Կեֆալիոնի խօսքերը մէջըբերել է Եւսեբիոսի միջնորդութեամբ («mediata dal Chronicon eusebiano») ¹¹⁴: Բայց մէկ տարի անց նա արդէն նշում է, որ իր կարծիքով Կեսարացու «ժամանակագրութեան» Գուտշմիրի մատնանշած նախադասութիւնն ամենեւին էլ խնդրոյ առարկայ հատուածին «շատ նման տեղի» («ganz ähnliche Stelle») չէ¹¹⁵: Այս դիտարկումը նա ամրապնդում է Խորենացուն նուիրուած իր վերջին ուսումնասիրութեան մէջ¹¹⁶: Զ. Տրայխնան Կեֆալիոնի խօսքերը դիտում է որպէս ուշ անտիկ պատմագրութեանը յատուկ մեթոդաբանական մի սկզբունքի մասին վկայութիւն, «աքսիոսկի» այն չափանիշի արտայայտութիւն, որով առաջնորդուում էին պատմագիրներն՝ անդրադառնալով միայն երեւելի անձանց գործունէութեանը: Որպէս Կեֆալիոնի «Պատմութեան» այս հատուածի նախօրինակ՝ իտալացի հայագէտը մատնացոյց է անում Դիոդորոս Սիկիլացու «Պատմական գրադարանից» մի հատուած, որտեղ հեղինակը նշում է, թէ ոչինչ իրեն չի ստիպում գրել այն թագաւորների մասին, որոնք չեն արել յիշարժան (μνημης ἄξιον) գործեր:

Զ. Տրայխնայից անկախ, մենք նոյնպէս ուշադրութիւն ենք հրաւիրել այն հանգամանքի վրայ, որ Խորենացին Կեֆալիոնի կորած երկից մէջըբերում է կատարել ոչ թէ Եւսեբիոսի «ժամանակագրութեան» միջոցով, այլ կա՛մ անմիջապատ աղբիւրից¹¹⁷: Մէջըբերման բովանդակութիւնն ակնյայտօրէն ցոյց է տալիս, որ այն վաւերական է, այլ ոչ թէ յօրինուած կեսարացի հեղինակի օգնութեամբ: Փորձենք պարզաբանել: Խորենացին Կեֆալիոնի «Պատմութիւնից» քաղուածք է կատարում ի հաստատումն իր

բաւարարուելով հակիրճութեամբ» (տօ՛ւ προοήκοντος πλέον τῆ συντομίας ἀπο-
 χρώμενος): Իսկ Դիոդորոս Սիկիւացուն
 ներկայացնելիս (70, p. 35a, 5) նա լրաց-
 նում է այս բնորոշումը՝ ասելով, որ Դիո-
 դորոսի գրուածքը նոյն ժամանակների
 մասին պատմելիս «շատ աւելի ընդար-
 ձակ է, քան Կեֆալիոնի» (Εστι δὲ
 πολλῶ πλατύτερος τοῦ Κεφαλίωνος):

Որպէս Կեֆալիոնի «Համառօտ պատ-
 մութեան» միւս տիպական յատկանիշ՝
 Փոտ պատրիարքն ընդգծում է նրա դի-
 դակտիկ բնոյթը՝ արձանագրելով, թէ Կե-
 ֆալիոնը «չի ցուցաբերում զարմանալի
 կամ նախանձելի ոչինչ, բացի պատմու-
 թեան միջոցով սովորելուց» (οὐδ' ἄλλο
 οὐδὲν ἄξιον θαυμάσαι καὶ ζηλώσαι
 ἐνδεικνύμενος πλὴν τῆς κατὰ τὴν ἱσ-
 τորίαν μαθήσεως): Սա նոյնպէս Համա-
 հունչ է Խորենացու մէջբերմանը, Համա-
 ձայն որի Կեֆալիոնը զանց է աւելում
 «աննշան ու վատ այրերին»։ նրանց օրի-
 նակով, եթէ միտքը շարունակենք Փոտ
 պատրիարքի օգնութեամբ, որեւէ լաւ բան
 Հնարաւոր չէ պատմութիւնից սովորել,
 ուստի Կեֆալիոնն իր ժամանակը նուիրել
 է միայն օրինակելի, «քաջ, իմաստուն ու
 աշխարհակալ» անձանց մասին գրելուն:

Չափազանց ուշադրաւ է դարձեալ
 Փոտ պատրիարքի «Գրադարանի»
 տուեալներով հաստատուող յաջորդ՝ վեր-
 ջին մանրամասը, ըստ որի Կեֆալիոնն
 օգտուել է «ի դիւանացն արքունի»:
 Դժուար է ճշտել, թէ թագաւորական որ
 դիւաններից է իր պատմութեան համար
 նիւթ քաղել Կեֆալիոնը, բայց որ նրա
 ձեռքի տակ եղել են անթիւ քանակու-
 թեամբ աղբիւրներ (որոնք այդպէս առա-
 տօրէն թերեւս կարող էին գոյութիւն ու-
 նենալ միայն որեւէ արքունական՝ դարեր
 շարունակ Հաւաքուած գրադարանում),
 երեւում է Փոտի հետեւեալ տեղեկութիւն-

ներից (որոնք հէնց իր՝ Կեֆալիոնի
 նշումների կրկնութիւնն են). «(Կեֆա-
 լիոնն) այդուհանդերձ ասում է, որ իր
 պատմութեան առաջին (գիրքը) շա-
 րադրուած է 570 գրուածքների հիման
 վրայ, որոնց 30 եւ 1 հեղինակների է նա
 յիշատակում. երկրորդը՝ 25 պատմիչների
 208 գրքերի, եւ երրորդը՝ 20 պատմիչնե-
 րի 600 գրքերի. ընդ սմին չորրորդը՝ 32
 պատմիչների 850 գրքերի, եւ հինգերոր-
 ւոր՝ 21 պատմիչների 200 գրքերի» («Κε-
 φαλίων) φησὶ δ' ὅμως τὸν πρῶτον αὐτῶ
 τῆς ἱστορίας συνειλέχθαι ἐκ λόγων μὲν
 φο', ὧν πατέρας λ' καὶ α' ἀπομνημονεύει·
 τὸν δὲ δεύτερον ἐκ βιβλίων σῆ', συγγρα-
 φέων δὲ κε'· καὶ τὸν τρίτον δὲ ἐκ βιβλίων
 μὲν χ', συγγραφέων δὲ κ'· τὸν μὲντοι τέ-
 ταρτον ἐκ βιβλίων ὧν', συγγραφέων δὲ
 λβ'· καὶ τὸν πέμπτον δὲ ἐκ βιβλίων σ',
 συγγραφέων δὲ κα'): Վեցերորդից ութե-
 րորդ «Մուսաների» համար Կեֆալիոնի
 օգտագործած աղբիւրների ու դրանց հե-
 ղինակների թիւը Փոտն անհասկանալի
 պատճառով բաց է թողնում, իսկ իննե-
 րորդ «Մուսայի» համար նշում է աղ-
 բիւրների (որոնց թիւը դարձեալ բացակա-
 յում է) 30 հեղինակ (սոյցրաֆեօն δὲ τρι-
 ἄκοντα) (68, p. 34a, 20-30):

Λόγος եւ βιβλίον այստեղ երեւի
 պէտք է հասկանալ ոչ թէ որպէս ամբող-
 ջական երկասիրութիւն, այլ դրա առան-
 ձին մաս՝ «գիրք», ինչպէս իր իսկ՝ Կե-
 ֆալիոնի պատմութեան ինը «գրքերը»:
 Այնուամենայնիւ ակնյայտ է, որ այսպի-
 սի թուով հին գրուածքներ Կեֆալիոնի
 համար կարող էին մատչելի լինել որեւէ
 նշանակալից «դիւանում», որից նա Հնա-
 րաւորութիւն կ'ունենար օգտուելու
 միայն անգրեցիկ մի իշխանաւորի (իշխա-
 նաւորների) միջնորդութեամբ կամ թոյլ-
 տուութեամբ:

Այս ամէնը մեզ թոյլ է տալիս եզրա-

կացնել, որ կորած «Ինը Մուսաների»
 «գլուխներից մէկից» («ասէ ի միում
 գլխոցն») Մովսէս Խորենացու քաղած
 հատուածի իսկութիւնը խորենացիադէտ-
 ների կողմից հերքուել է անիրաւացի-
 րէն: Հնարաւոր չէ պարզել, թէ ինչ լե-
 զուով եւ ինչպէս է հատուածը հասել Խո-
 րենացուն, ամբողջական տեքստի հետ
 մէկտե՞ղ, թէ՞ որպէս առանձին պատուիկ
 (իրականութեանն աւելի մօտ է թոււմ
 երկրորդ Հնարաւորութիւնը), սակայն
 մէջբերման մանրակրկիտ քննութիւնը եւ
 մաս առ մաս զուգադրումն օժանդակ
 ստոյգ աղբիւրների հետ հաստատում է,
 որ այլուր սիւսուած արժանահաւատ հա-
 տուածների կողքին պէտք է դնել նաեւ
 այս մէկը: Դա կը նշանակի վերադառնալ
 Կ. Միւլլերի տարբերակին՝ հրատարա-
 կուած Գուտշմիդի ուսումնասիրութիւնից
 առաջ, եւ մերժել Ֆ. Յակոբիի մօտեցու-
 մը: Այն, որ Եւսեբիոսի «Ժամանակա-
 վրութեան» մէջ գտնուել է մի Համա-
 նման տեղի (որ ոչ մի դէպքում չի կա-
 ըող բառացի զուգահեռ համարուել),
 տատում է Կեֆալիոնին վերագրուած
 խօսքերի վաւերականութիւնը, քանզի
 այդ երկու հատուածները լրացնում են
 միմեանց՝ առաւել ամբողջական պատկե-
 րացում տալով ուշ անտիկ պատմագրի
 որդեգրած Համառօտաբանութեան սկզբ-
 բունքի եւ յիշարժանութեան չափանիշի
 մասին:

Կեֆալիոնի անունը «Հայոց պատ-
 մութեան» մէջ կարդում ենք եւս մէկ ան-
 գամ (I, 18): Խորենացին պատմում է Ա-
 սորեստանի առասպելական Շամիրամ
 թագուհու մասին՝ ըստ Մար Աբասի: Ա-
 պա՝ որպէսզի ընթերցողներն իրեն ան-
 տեղեակ չհամարեն, գրում է, թէ ինքը
 գիտէ նաեւ դէպքերի յաջորդականու-
 թիւնը՝ Համաձայն Կեֆալիոնի. «Ունիմ ի
 թիւնը՝ Համաձայն Կեֆալիոնի»:

մտի եւ զԿեփաղիոնին, վասն ոչ տալ
 զմեզ բազմաց ծաղրել. զի ասէ ի բազմաց
 այլոց նախ յաղաքս ծննդեանն Շամիրա-
 մայ, եւ ապա զպատերազմն Շամիրամայ
 մայ, եւ ապա զպատերազմն Շամիրամայ
 ընդ Ջրադաշտի եւ գյաղթելն ասէ Շամի-
 րամայ, եւ ապա ուրեմն զպատերազմն
 հնդկաց» (Հմմտ. «Ժամանակագրութեան»
 մէջ. «Ջառաղինն Ասիացոց Ասորեստա-
 նեայք թագաւորեցին, յորոց էր Նինոս
 Բեղեան... Ապա ի նոյն յարեալ՝ (Կեփա-
 ղիոն) ասէ եւ զծնունդն Շամիրամայ. եւ
 զՋարաւըշտ (=Ջրադաշտ) մոզի արքայի
 Բակտրացոց զպատերազմն եւ զպարտութե-
 ան Շամիրամայ. եւ զամս թագաւորութեանն
 Նինայ՝ ամս քք. եւ զվախճանէ նորա:
 Յետ որոյ թագաւորեալ Շամիրամայ՝ ած
 պարիսպ Բաբելոնի զայն ձեւ օրինակի...
 Ապա եւ զգործողովն լինել Շամիրամայ
 ի վերայ. հնդկաց աշխարհին վիպա-
 րէ...»¹²⁹): Դարձեալ թոււմ է՝ ամէն ինչ
 պարզ է. Խորենացին հերթական անգամ
 օգտուում է «Ժամանակագրութիւնից»:
 Գուցէ եւ այդպէս է, բայց այստեղ նոյն-
 պէս ունենք բնագրի հետ համեմատելու
 հնարաւորութիւն: Ահա նոյն հատուածը՝
 հին յունարէն, վերցուած նոյն՝ Եւսեբիո-
 սի «Ժամանակագրութիւնից»՝ Սինկլլոսի
 «Τὸ παλαιὸν τῆς Ἀσίας ἑβα-
 τέρησιν. „Τὸ παλαιὸν τῆς Ἀσίας ἑβα-
 σίλευσαν Ἀσσύριοι, τῶν δὲ ὁ Βήλου
 Νίνος. Εἶτ' ἐπάγει γένεσιν Σεμίραμεις
 καὶ Ζωροάστρου μάγου ἔτη τε νβ' τῆς
 Νίνου βασιλείας. Μεθ' ὃν Βαβυλώνα,
 φησὶ, ἡ Σεμίραμεις ἐτείχισε... στρατείαν
 τε αὐτῆς κατὰ τῶν Ἰνδῶν καὶ ἤτταν.,
 («Հնում Ասիայում թագաւորեցին աս-
 րեստանցիները, որոնցից էր Բելոսի որդի
 Նինոսը: Ապա (Կեֆալիոնը) պատմում է
 Շամիրամի ու Ջրադաշտ մոզի ծնունդը,
 նաեւ՝ Նինոսի թագաւորութեան յիսու-
 ներկու տարիները: Որից յետոյ, ասում է,
 Շամիրամը պարսպապատեց Բաբելոնը...
 նաեւ (պատմում է) նրա արշաւանքը

Հնդկաստան ու պարսուկները): Ինչպէս տեսնում ենք, «բակտրացիների արքայ» Ջրադաշտ մոգի դէմ Շամիրամի պատերազմի ու յաղթանակի մասին հին յունարէն բնագրում խօսք չկայ, այսինքն՝ Հայերէնում Համապատասխանաբար պէտք է լինէր. «ասէ եւ զծնունդսն Շամիրամայ եւ զՋարաւըշտ մոգի, եւ զամս թագաւորութեանն Նինայ՝ ամս ծք», առանց «արքայի բակտրացւոց զպատերազմէն եւ զպարսուկենէ ի Շամիրամայ»: Կարելի է երկու ենթադրութիւն անել. առաջին՝ որ Սինկելլոսի մէջբերումը թերի է: Սա աւելորդաբար՝ առաւել պարզ, հաւանական թուացող եւ թոյլ դիմադրութեան ճանապարհով Հասանելի լուծումն է, որ առաջարկել է դեռ Մ. Աւգերեանը¹³⁰, յունարէնում պակասութիւնը նկատելով: Նա իրաւամբ բնագրում բացակայող Հատուածը քերականորէն անկատար է համարել ու փորձել խմբագրել՝ ափսոսանք յայտնելով, որ յունարէնը պակասաւոր է, այլապէս խմբագրումն աւելի ճշգրիտ կը լինէր:

Երկրորդ հնարաւոր ենթադրութիւնն այն է, որ յունարէն բնագիրը թերի չէ, եւ «արքայի բակտրացւոց զպատերազմէն եւ զպարսուկենէ ի Շամիրամայ»՝ պարզապէս ընդմիջարկութիւն է Հայերէնում՝ ըստ երեւոյթին աւելացուած ոչ թէ թարգմանչի, այլ հետագայ խմբագրողի ձեռքով: Այս դէպքում դարձեալ հարկ կը լինի խօսել «Ժամանակագրութեան»՝ մեզ հասած տարբերակի վրայ խորհեացու ազդեցութեան մասին: Սա թերեւս պակաս հաւանական թուացող, բայց ոչ հեշտութեամբ մերժելի բացատրութիւն է: Սինկելլոսի մօտ շարադրանքը միանգամայն սահուն է, աղճատման որեւէ հետք նկատելի չէ: Շամիրամի կեանքի հետ կապուած մի էական դրուագի բացթողումը նրա կողմից բառացի մէջբերում կատարե-

լիս (որի հետեւանքով նախադասութեան բովանդակութիւնը բոլորովին փոխուել է) դժուար է հնարաւոր համարել: Կարգանք յունարէն բնագիրը փոքր-ինչ աւելի լայն համատեքստով եւ կը տեսնենք, որ այնտեղ Հայերէնի համեմատ պակասում են նաեւ ուրիշ հատուածներ. «...Յորոց էր Նինոս Բեղեան. առ նորա թագաւորութեամբն բազում իրք եւ մեծամեծ արտօթիւք գործէին: Ապա ի նոյն յարեալ ասէ...» (Հմմտ. „τῶν δὲ ὁ Βήλου Νίνος. Εἴτ' ἐπάγει, — «որոնցից էր Բելոսի որդի Նինոսը: Ապա (Կեֆալիոնը) պատմում է...»), «Ապա եւ զգործողովն լինել Շամիրամայ ի վերայ Հնդկաց աշխարհին վիպագրէ, եւ զպարսուկիւն նորա եւ զփայտուտ, եւ թէ զհարդ ինքնին զիւր որդիսն կոտորեաց. եւ ինքն ի Նինեայ որդւոյն իւրոյ սպանաւ, թագաւորեալ ամս լք: Յետ որոյ Նինուս առնոյր զիշխանութիւնն, գորմէ աւէ Կեփաղիոն՝ թէ ոչինչ արժանի յիշատակի գործ գործեաց» (Հմմտ. „στρατείαν τε αὐτῆς κατὰ τῶν Ἰνδῶν καὶ ἦτταν, καὶ ὅτι τοὺς ἰδίους ἀνεῖλεν υἱοὺς καὶ ὑπὸ Νινύου τῶν παίδων ἐνὸς ἀνθρώπου, τοῦ διαδόξομένου τὴν ἀρχήν, — «Նաեւ (պատմում է) նրա արշաւանքը Հնդկաստան ու պարսուկիւնը, եւ թէ ինչպէս (նա) իր որդիներին սպանեց ու սպանուեց զաւակներից մէկի՝ Նինուսի ձեռքով, որն ստանձնեց իշխանութիւնը»):

Աներեւակայելի է մի փոքր հատուածում այսքան բացթողումներ, մանաւանդ Գէորգիոս Սինկելլոսի կողմից, որն իր աղբիւրներից բառացիորէն արտագրելու ընդունակութեամբ օժտուած հմուտ բանաբար էր: Առանձնացնենք յունարէնում պակասող երկու առաւել մեծ հատուածները. ա) «առ նորա թագաւորութեամբն բազում իրք եւ մեծամեծ արտօթիւք գործէին», բ) «գորմէ ասէ Կեփաղիոն՝ թէ ոչինչ արժանի յիշատակի գործ գործեաց»:

Սրանք ակնյայտօրէն յիշեցնում են խորհնացու սիրած արտայայտութիւնները, որոնք նրա «Պատմութեան» մէջ Հանդիպում են ամէնուրեք: Օրինակները բազմաթիւ են, բերենք մի քանիսը. «Եւ զայս Բարշամ վասն իւրոց արտօթան բազում գործոց... պաշտեցին» (I, 14), «Բազում եւ այլ գործք քաջութեան ի սմանէ՝ գտանին կատարեալ» (I, 14), «...Ոչ պարծանք ինչ նոցա... օտար ազգաց քաջութիւն եւ գործք արտօթան» (I, 14), «...Հրամայէ գործք արտօթան» (I, 14), «...Հրամայէ գրազում մատեանս... գործոց քաջութեան, այրել» (I, 14), «Գրեմ... որ ինչ եղեալ աստ գործ քաջութեան եւ արտօթան» (II, 1), «...Հերովդէս, յետ բազում գործոց արտօթան ինչ գործոց» (II, 47), «Թագաւորութեան ինչ գործոց» (II, 8), «Այլ որ ինչ գործք եղեալ... ոչ ինչ յիշատակաց արժանի համարեցաք» (II, 36), «...Մի ինչ ի մէջ մնաւ... արժանի յիշատակի մերոց շարագրութեանց» (III, 1): Վերջապէս, յունարէնում բացակայող այդ երկու նախադասութիւնների միացութիւնն ու զրեթէ բառացի կրկնութիւնը կարելի է համարել հետեւեալ հատուածները. «...Բազում գործք աւելալ հատուածները. «...Հարում գործք արտօթան գտանին գործեալ եւ ի մերում աշխարհիս, եւ արժանի գրոյ յիշատակի» (I, 3) եւ՝ «Տիրան վերջին... մեռանի ոչ ինչ գործ արտօթան արժանի յիշատակի ցուցեալ» (II, 64): Խորհնացուն սիրելի բաներն ու ոճը «Ժամանակագրութեան» թարգմանութեան մէջ Հանդիպում են թարգմանութեան մէջ Հանդիպում են նաեւ այլուր՝ դարձեալ այնպիսի դէպքերում, երբ այդ բաները յունարէն բնագրում բացակայում են: Ահա նաբուգոզոնոսի մասին մի հատուած՝ Յովսէփոսի «Ընդդէմ Ապիոնի»-ից (I, 133)¹³¹. «Տիրել ասէ բարեղացւոյն եգիպտացւոց աշխարհին... անցեալ զանցեալ զամենեւնի արտօթանք եւ քաջութեամբ».

նարէնում վերջին երկու բառը չկան, այլ արտայայտութիւնը հետեւեալ կերպ է. „πάντας δὲ ὑπερβαλλόμενον τοῖς πράξεσι, («գործերով բոլորին գերազանցելով»), ահա ուրիշ օրինակներ՝ Դիոդորոսի «Պատմական գրադարան»-ից (II, 1, 4; II, 22, 5; I, 44, 4)¹³². «Նինոս... մեծամեծ արտօթիւք եւ քաջութիւն վարեաց», «զՄեմնութիւնս արտօթիւք ինչ արտօթիւք... ասեն նեայ զայսպիսի ինչ արտօթիւք», «...Որպիսի ոք յիւրաքանչիւր թագաւորացն եղեւ արտօթանք եւ քաջութեամբ»: Յունարէնում գրուած է. „Νίνος... μεγάλας πράξεις ἐπετελέσατο, («Նինոսը... մեծ գործեր կատարեց»), „Περὶ μὲν οὖν τοῦ Μέμνονος τοιαῦτα... φασὶν οἱ βάρβαροι, («Մեմնոնի մասին այսպիսի բաներ... են ասում բարբարոսները»), „...Ὀπηλικὸς ἕκαστος τῶν βασιλευσάντων ἐγένετο τῷ μεγέθει, («...Ինչպիսին եղաւ թագաւորողներից իւրաքանչիւրը մեծութեամբ»):

Առհասարակ Հայերէն «Ժամանակագրութեան» մէջ յաճախ են Հանդիպում ընդմիջարկութիւններ, որոնք Համապատասխան յունարէն հատուածներում չկան¹³³: Օրինակ՝ հետեւեալ նախադասութիւնը, որտեղ թարգմանչի կամ հետագայ խմբագրի յաւելումն ակնբերել է¹³⁴. «Կրովն ասէ նմա ի քուն յայտնել, գոր հայրն աճուանեմ Արամազդայ, եւ այլք՝ ժամանակ, ի հնգետասաներորդում դէսիոս ամսեան». շեղատառ հատուածը յաւելում է (իհարկէ այլ՝ բացատրական բնոյթի, բայց մեզ համար կարեւոր է երեւոյթն ինքնին), որ չկայ բնագրում (Հմմտ. Ալեքսանդր Բազմավէպի գրքից (Եւսեբիոսի միջոցով) Սինկելլոսի քաղուածքի հետ): Յունարէնում յաճախ չկան նաեւ տարբեր հեղինակների առնչուող՝ հետեւեալ տիպի նախադասութիւններ ու արտայայտութիւններ. «Եւ յետ ամենայն պատմութեանն՝ ի նոյն

յարեալ ասէ»¹³⁵, «Եւ դարձեալ ի միւսում վայրի Առջնայ պատմէ ձեռ գայս օրինակ»¹³⁶ (Հմմտ. Խորենացի. «Եւ գրէ առ նա ձեռ բանից օրինակ գայս» (I, 8), «Բայց յարէ զկարգ բանից... օրինակ գայս» (I, 20), «Նոյն այր ասէ, եթէ... ածեն իւրեանց յօգնականութիւն» (II, 76)), «Եւ դարձեալ եւս յառաջ մատուցեալ՝ զնովիմբ ածէ»¹³⁷ (Հմմտ. Խորենացի. «...Նոյն ժամանակագիր յառաջ մատուցեալ ասէ» (I, 9), «Եւ յառաջ մատուցեալ զբանս իւր ասէ» (I, 11)):

Դեռեւս վաղ է Խորենացու «Պատմութեան» հիման վրայ Եւսեբիոսի «Ժամանակագրութեան» հետագայ խմբագրման մասին վստահօրէն խօսելու համար, հակառակ այդ երկու գրուածքների առնչութիւնների աւանդական, խորենացիագիտութեան աւելի քան հարիւրամեայ պատմութեան ընթացքում ձեւաւորուած մեկնաբանութեանը, այն է՝ բանաքաղութիւն բացառապէս Խորենացու կողմից: Խնդիրը մանրակրկիտ ուսումնասիրելու անհրաժեշտութիւն կայ: Այդուհանդերձ արդէն կարելի է արձանագրել, որ ինչպէս քիչ առաջ, այնպէս էլ Աբիդենոսի աւիթով բերուած օրինակները նորովի մտածելու տեղիք են տալիս: Փաստն ակնառու է. ամբողջ նախադասութիւններ կամ արտայայտութիւններ, բառեր, որոնք Եւսեբիոսի երկի՝ պահպանուած յունարէն հատուածներում չկան, երբեմն, նոյնութեամբ կամ իրար խիստ նման տարբերակներով, առկայ են ե՛ւ «Ժամանակագրութեան» հայերէն թարգմանութեան, ե՛ւ Խորենացու «Պատմութեան» մէջ:

Վերադառնալով Շամիրամի եւ Զրադաշտ մոզի միջեւ պատերազմի դրուագին, որը Սինկելլոսի քաղուածքի մէջ տեղ չի գտել¹³⁸, հարկաւոր է աւելացնել հետեւեալը: Այդ տուեալի՝ հետագայ ընդմիջարկութիւն լինելու օգտին է վկա-

յում սոյն հանգամանքը: Համաձայն անտիկ պատմագրական աւանդոյթի՝ բակտրացիների դէմ, որոնց թագաւոր է քննարկուող հատուածում անուանուում Զրադաշտ մոզը, պատերազմել է ոչ թէ Շամիրամը, այլ Նինոսը: Այս մասին իմանում ենք Դիոդորոս Սիկիլացուց, որ մանրամասնօրէն անդրադարձել է ասորեստանցիների ու բակտրացիների կիսաառասպելական պատերազմին (II, 4, 1-10): Ըստ Դիոդորոսի՝ Շամիրամը Նինոսի արշաւանքի ժամանակ նոյնիսկ դեռ թագուհի չէր, այլ պալատական պաշտօնեաներից մէկի կինը: Կարելի է, որ Դիոդորոսի տեղեկութիւնը հաստատուում է հէնց նոյն՝ Եւսեբիոսի «Ժամանակագրութեան» միջոցով, որի երկրորդ մասում՝ ժամանակագրական աղիւսակներում գրուած է. «Զրադաշտ մոզ՝ արքայ բակտրացուց՝ ճանաչի. ընդ որում պատերազմ ետ Նինոս» (Հմմտ. «Աւետարանական պատրաստութեան» մէջ (PE, X, 9, 484). „Νίνος... καθ’ ον Ζωροάστρης ο Μάγος Βακτριών έβασίλευσε,– «Նինոսը... որի օրօք Զրադաշտ մոզը բակտրացիներին թագաւորեց»): Ինչո՞ւ պէտք է նոյն Եւսեբիոսը, փաստօրէն Կեֆալիոնի նոյն տուեալից ելնելով, նախ Զրադաշտ մոզի դէմ պատերազմի առաջնորդ անուանէր Շամիրամին, եւ ապա՝ Նինոսին:

Այսպիսով, իբրեւ հատուածի բացատրութեան երկրորդ տարբերակ, մնում է եզրակացնել, որ հայերէն «Ժամանակագրութեան» մէջ նախադասութիւնն սկզբում եղել է յունարէն բնագրի նման. «ասէ (Կեֆալիոն) եւ զճնունդսն Շամիրամայ եւ զԶարաւըշտ մոզի», իսկ «արքայի բակտրացուց զպատերազմէն եւ զպարտութենէ ի Շամիրամայ»՝ աւելացուել է հետագայում, հաւանական է՝ Խորենացու ազդեցութեամբ, որն իր հերթին տուեալը քաղել է մեզ անյայտ աղբիւ-

րից: Բոլոր դէպքերում բաց է մնում մէկ հարց. արդեօ՞ք Շամիրամի ու Զրադաշտ մոզի միջեւ պատերազմի մասին իսկապէս յիշատակութիւն է ունեցել Կեֆալիոնը՝ հակասելով Դիոդորոսի պատմածին, թէ՞ հակասելով Նինոսի պատմածին, որն այդ տեղեկութիւնը թիւրիմացաբար նրան անվերապարէլ հայերը, տեղական աւանդոյթների հետ միախառնման հետեւանքով:

Բանասիրական տարբեր խնդիրների անդրադառնալով՝ մենք փորձեցինք նաեւ այդ տալ, որ Խորենացու «Հայոց պատմութեան» առաջին գլուխների ու մասնակցի «Աբիդենոս, Ալեքսանդր Բագմավէպ, Աբիդենոս եւ Կեֆալիոն պատմիչների հետ կապուած հատուածների աղբիւրագիտական պատկերն առաւել բարդ է, քան, շնորհիւ Ա. Ֆոն Գուտշմիլերի հեղինակութեան, ներկայացրել են մի շարք անուանի հայագէտներ՝ հիմնականում ամէն ինչ յանգեցնելով Եւսեբիոս «Ժամանակագրութեան» հայեարացու «Ժամանակագրութեան» Մեր կարծիքը յերէն թարգմանութեանը: Մեր կարծիքը լրացուցիչ մանրամասով ամրապնդելու յետոյ առաջին վկայակոչումից յետոյ նոյն գլխի (I, 5) վերջում Խորենացին յիշում է «ոմն Արիոսի», որը ուրիշ շարքում է «ոմն Արիոսի», որը ուրիշ շարքում է «ոմն Արիոսի»՝ «զպրուտների նման քաղղէացիների յունարէն. թիւնը» թարգմանել է յունարէն. «...Յոյնք ինքեանք ի Քաղղէացուցն փոխեցին յիւրեանց լեզուն... եւ Քաղղէացիք ինքեանկամ յօժարութեամբ եւ կամ ի հրամանէ թագաւորաց հարկեալ զայս ի հրագործել, որպէս Առիոս ոմն եւ այլք բազումք»: Ռ. Թոմսոնը գրում է, որ Արիոսի անունը Խորենացին վերցրել է Եւսեբիոսից¹³⁹: Ընդ մին նա որեւէ կերպ չի բացատրում, թէ ինչ ճանապարհով Մինչդեռ լրացուցիչ բացատրութեան կարիք կայ, քանի որ ոչ «Ժամանակագրութեան», ոչ էլ «Եկեղեցու պատ-

մութեան» մէջ, որոնք եղել են Խորենացու աղբիւրները, Արիոս անունով անձնաւորութիւն, որը քաղղէերէնից յունարէն թարգմանութիւններ է կատարել: չի յիշատակում: Նման մէկի մասին Եւսեբիոսն անյայտ մի հեղինակի վկայութիւն է պահպանել «Աւետարանական պատրաստութիւն»-ում, որը հայերէն չի թարգմանուել ու Խորենացուն ծանօթ չի եղել: Ըստ երեւոյթին հետեւելով Ռ. Թոմսոնին՝ Գ. Սարգսեանը «Հայոց պատմութեան» իր ուսերէն թարգմանութեան ծանօթագրութիւններում գրում է. «Արիոս. Եւսեբիոս Կեսարացին հաղորդում է, որ նա եգիպտերէնից յունարէն թարգմանութիւններ էր անում»¹⁴⁰: Չի նշում, թէ Եւսեբիոսը որտեղ է յայտնում այդ տեղեկութիւնը, եւ տպաւորութիւն է ստեղծում, որ Խորենացին դարձեալ օգտուել է «Ժամանակագրութիւնից»:

Եւսեբիոսի տուեալը կցկտուր է (PE, I, 10, 40). վերոյիշեալ անյայտ հեղինակը խօսում է եգիպտական մի գրուածքի մասին, «որը յունարէն թարգմանեց Արիոս Հերակլեոպոլիսցի» (ὄν μετέφρασεν εἰς ἑλλάδα φωνήν Ἄρειος Ἡρακλεοπολίτης): Անտիկ աշխարհում «Արիոս» անունով մի շարք գործիչներ են եղել, որոնցից առաւել նշանաւոր էին ստոյիկ փիլիսոփայ Արիոս Դիդիմոսը (մ.թ.ա. I դ.)՝ Օգոստոս կայսեր ուսուցիչը, եւ հերետիկոս քրիստոնեայ Արիոս Ալեքսանդրացին (մ.թ. մօտ 260-336 թթ.): «Ոմն Արիոսը» չի համապատասխանում նրանցից ոչ մէկին: Քանի որ նա նոյնպէս թարգմանութիւններ է կատարել, թէկուզեւ ոչ եգիպտերէնից, երեւի նրա ու Արիոս Հերակլեոպոլիսցու նախատիպը միեւնոյն անձնաւորութիւնն է: Սակայն Խորենացու աղբիւրն ակնյայտօրէն «Աւետարանական պատրաստութիւնը» չէ. այն պարզապէս հաստատում է, որ նման մէկն իրօք եղել

է, եւ խորենացու տեղեկութիւնը ճշմարիտ է:

Այս ամէնից յետոյ մնում է առանց կասկածի ընդունել «յունական» միջավայրից խորենացուն բնագրով կամ թարգմանաբար հասած այն անյայտ աղբիւրի (աղբիւրների) գոյութիւնը, որից (որոնցից) նա քաղել է Պտղոմէոս Յիւլագելֆոսի՝ Բերոսոսին պատմութիւնը գրելու հրաման տուած թագաւորի, հին ժողովուրդների յայտնի «արուեստների» վերաբերեալ տուեալները, մէջբերուած Կեֆալիոնի «Ինը Մուսաների» գլուխներից մէկից եւ թարգմանիչ Արիոսի յիշատակումը: Հնարաւոր է, որ Եւսեբիոսի «Ժամանակագրութիւնից» տարբեր այդ գրուածքը (գրուածքները) խորենացուն օժանդակած լինի (լինեն) նաեւ Աբիդենոսի հետ կապուած հատուածներում ու Կեֆալիոնին երկրորդ անգամ վկայակոչելիս: Ինչ վերաբերում է հայ եօթ նահապետների վիճարկոյց ցանկին, ապա որոշակի հիմքեր կան ենթադրելու, թէ նրանց անուններն իսկապէս եղել են Աբիդենոսի ազգաբանութիւններում եւ մտել այն մատենի մէջ, որը, համաձայն խորենացու, Հայաստան էր բերել Մար Աբասը:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- 1 Մովսէս Խորենացի, Հայոց պատմութիւն, Թարգմանութիւն, ներածութիւն եւ ծանօթագրութիւններ դոկտոր Ստ. Մալխասեանի, Երեւան, 1940 (այսուհետեւ՝ Մովսէս Խորենացի), էջ XXXI
- 2 Մովսէս Խորենացի, էջ XXXIII:
- 3 Խորենացու «Պատմութիւնից» մէջբերումներն անում ենք ըստ հետեւեալ հրատարակութեան. Մովսէս Խորենացի, Պատմութիւն հայոց, Քննական բնագիրը եւ ներածութիւնը Մ. Աբեղեանի եւ Ս. Յարութիւնեանի (նմանահամութիւն), լրացումները Ա. Բ. Սարգսեանի, Երեւան, 1991 (այսուհետեւ՝ ՄԽ):
- 4 A. v. Gutschmid, "Über die Glaubwürdigkeit der armenischen Geschichte des Moses von Khoren", *Berichte über die Verhandlungen der königlichen sächsischen Gesellschaft der Wissenschaften zu Leipzig*, *Phil.-Hist. Classe*, 1876, N 28 (այսուհետեւ՝ A. v. Gutschmid, "Über die Glaubwürdigkeit"):

- 5 Տե՛ս Ա. Թոփչեան, «Մովսէս Խորենացու յիշատակած յունական մի քանի աղբիւրների մասին», *Աշտանակ (հայագիտական պարբերագիրք)*, Ա., Երեւան, 1995 (այսուհետեւ՝ Ա. Թոփչեան, «Խորենացու մի քանի աղբիւրների մասին»), էջ 75-85. նոյնի՝ «Մովսէս Խորենացու «Հայոց պատմութեան» մարաբասեան մի հատուած», *Աշտանակ (հայագիտական պարբերագիրք)*, Բ, Երեւան, 1998, էջ 56-63. նոյն, «Փիրմիլիանոսի «պատմութիւնը» որպէս Մովսէս Խորենացու աղբիւր», *Հանդէս ամսօրեայ*, 1997, էջ 65-88 (նոյն, *Պատմա-բանասիրական հանդէս*, 1999, 1, էջ 220-236). նոյն, «Յուլիոս Աֆրիկանոսի «Ժամանակագրութիւնը» եւ Մովսէս Խորենացի», *Պատմա-բանասիրական հանդէս*, 2000, 2, էջ 128-159:
- 6 Խնդրոյ առարկայ հեղինակների հետ Խորենացու առնչութեան մասին մենք համառոտ գրել ենք «Աշտանակ» հայագիտական պարբերագրի առաջին հատորում. տե՛ս Ա. Թոփչեան, «Խորենացու մի քանի աղբիւրների մասին»:
- 7 Անտիկ գրականութեան մէջ Χαλδαῖος («քաղդէացի») կամ «քաղդէայ» բառի գնահատութիւնների մասին տե՛ս. М. Дандмаева, «Этноним Χαλδαῖοι в античной традиции», *Iran & Caucasus*, v. III-IV, Tehran, 1999-2000, с. 315-320.
- 8 Տե՛ս *Realencyclopädie der klassischen Altertumswissenschaft*, Edd. A. Pauly, G. Wissowa, W. Kroll. Stuttgart, 1893 – (այսուհետեւ՝ *RE*), Bd. III, s.v. Berossos (4), Kol. 309-316 (Schwartz); P. Schnabel, *Berosus und die babylonisch-hellenistische Literatur*, Berlin, 1923 (Hildesheim, 1968) (այսուհետեւ՝ P. Schnabel, *Berosus*), S. 3-15, 16-32; *The Oxford Classical Dictionary*, Edited by N. G. L. Hammond and H. H. Scullard. Second Edition, Oxford, 1975, s.v. Berosus (E. A. Barber): Բերոսոսի անուան յիշատակումները հետագայ հեղինակների երկերում եւ նրա գրքից պահպանուած հատուածները տե՛ս С. Müller, *Fragmenta Historicorum Graecorum*, Paris, 1841-1870 (այսուհետեւ՝ *FHG*), v. II, p. 495-510, նաեւ՝ F. Jacoby, *Die Fragmente der griechischen Historiker*, Berlin (Leiden), 1923 – (այսուհետեւ՝ *FGrHist*), Bd. III, 680:
- 9 Յ. Անասեանը թիրիմացաբար Ալեքսանդր Բագմավէպին համարում է մահացած «75 թ.» նախքան մեր թուարկութիւնը» (տե՛ս Յ. Ա. Անասեան, *Հայկական մատենագիտութիւն, Ե-ԺԸ դդ.*, հտ. Ա., Երեւան, 1959, սիւնակ 554 («Ալեքսանդր Բագմավէպ» անուան տակ)), մինչդեռ այս հեղինակի գրական ակտիւ գործունէութիւնն սկսուել է մ.թ.ա. 60-ական թուականներին միայն, եւ նրա հիմնական մեծածառայ երկասիրութիւնը հաւանաբար գրուել է մ.թ.ա. 49 թ. յետոյ. տե՛ս ստորեւ յղուող գրականութեան մէջ:

- 10 Տե՛ս *RE*, Bd. I, s.v. Alexandros (88), Kol. 1449-1452 (Schwartz); *The Oxford Classical Dictionary*, s.v. Alexander (11) (F. W. Walbank); *FHG*, v. III, p. 206-244; *FGrHist*, Bd. III, 273; P. Schnabel, *Berosus*, S. 134-168:
- 11 Յ. Անասեան այս հեղինակի մասին էլ տալիս է սխալ տեղեկութիւն՝ գրելով, որ Աբիդենոսն «ապրած է համարում առաջին Պտղեմէանների օրով» (այսինքն՝ մ.թ.ա. III դարում) (տե՛ս Յ. Ա. Անասեան, *Աշտ.*, հ. Ա., սիւնակ 60 («Աբիդենոս» անուան տակ)): Դժուար է ասել, («Աբիդենոս» անուան որտեղից է վերցրել այս թէ անուանի հայագէտը որտեղից է վերցրել այս թէ անուանի հայագէտը չէր կարող ապրած լինել առաջին Պտղեմէանների օրը առնուազն այն պատճառով, որ իբրեւ աղբիւր օգտագործել է Ալեքսանդր Բագմավէպի գիրքը (մ.թ.ա. I դ.). տե՛ս ստորեւ յղուող գրականութեան մէջ:
- 12 Այսուհետեւ՝ *PE*. տե՛ս J.-P. Migne, *Patrologiae Cursus Completus. Series Graeca*, Paris, 1857-1866 (այսուհետեւ՝ *PG*), t. 21:
- 13 Տե՛ս *RE*, Bd. I, s.v. Abydenos, Kol. 123 (Schwartz); *FHG*, v. IV, p. 279-285; *FGrHist*, Bd. III, 685; P. Schnabel, *Berosus*, S. 136-137, 147-150, 164-166:
- 14 Տե՛ս *RE*, Bd. XI, s. v. Kephalion, Kol. 191-192 (Jacoby); *FHG*, v. III, p. 625-631; *FGrHist*, Bd. II, 93:
- 15 A. v. Gutschmid, "Über die Glaubwürdigkeit", S. 26-28.
- 16 Գ. Չարպիանայեան, *Պատմութիւն հայ հին դարերէն (Դ-ԺԳ դար)*, Վենետիկ, 1932, էջ 355:
- 17 Г. Халатяни, *Армянский эпос в «Истории Армениии» Моисея Хоренского* (այսուհետեւ՝ Г. Халатяни, *Армянский эпос*), ч. 1, Москва, 1896, с. 49-50.
- 18 Ա. Չամիսեան, *Հայ գրականութեան պատմութիւն*, Նոր-Նախիջեան, 1914, էջ 112:
- 19 Մովսէս Խորենացի, էջ XXXII:
- 20 Մ. Աբեղեան, *Հայոց հին գրականութեան պատմութիւն*, Երկեր, հ. Գ, Երեւան, 1968, էջ 291-292:
- 21 Moses Khorenats'i, *History of the Armenians*, Translation and Commentary on the Literary Sources by R. W. Thomson, Cambridge (Mass.), London, 1978 (այսուհետեւ՝ Moses Khorenats'i), p. 14, 70, n. 2.
- 22 Мовсес Хоренаци, *История Армении*, Перевод с древнеармянского языка, введение и примечания Гагика Саркисяна, Ереван, 1990 (այսուհետեւ՝ Мовсес Хоренаци), с. 220, 238.
- 23 Moïse de Khorène, *Histoire de l'Arménie*, Nouvelle traduction de l'arménien classique par Annie et Jean-Pierre Mahé, Paris, 1993 (այսուհետեւ՝ Moïse de Khorène), pp. 28-29, 328-329.
- 24 Մասնագէտների կողմից առարկութեան ընդունուած տեսակէտի մերժման ծայրայեղ արտայայտութիւն պէտք է համարել Հրանտ Բ. Արմէնի եզրակացութիւնը: Նա վստահ է, որ Խորենացին

անցին բնագրով կարդացել է ինչպէս Աբիդենոսին, այնպէս էլ Կեֆալիոնին (Բերոսոսի եւ Բագմավէպի վերաբերեալ գրում է՝ «հաւանաբար»): Ընդ մինն նա չի բերում որեւէ էական փաստարկ (տե՛ս Հրանտ Բ. Արմէն, «Խորենացին եւ աղբիւրներու ընտրութիւնը», *Պատմա-բանասիրական հանդէս*, 1964, 4, էջ 215):

- 25 *Եւսեբի Կեսարացոյ Ժամանակակաւնք Երկ-մասնեայ* թարգմանեալ ի լատին բարբառ աշխատասիրութեամբ Հ. Մկրտիչ Վրդ. Աւգերեանց (այսուհետեւ՝ *ԵԺ*), մասն Ա-Բ, Վենետիկ, 1818, մասն Ա, էջ 62-63:
- 26 Г. Халатяни, *Армянский эпос*, ч. 1, с. 50.
- 27 Վերջին հատուածը, «ի յոյն լեզու»-ից լետոյ, մէջբերում ենք ի լրումն խալաթեանցի քաղուած-քի՝ պատկերն առաւել ամբողջացնելու նպատակով: Դժուար հասկանալի այդ սկզբնատարը «Հայոց պատմութեան» քննական հրատարակութեան տողատակում վերծանուած են с տառով նշուած ձեռագրի օգնութեամբ (տե՛ս ՄԽ, էջ 9):
- 28 Moses Khorenats'i, p. 67, n. 2.
- 29 Նշենք նաեւ, որ առհասարակ Բերոսոսի՝ որպէս «քաղդէացի այրի» յիշատակումը միանգամայն բնական է, եւ պարտադիր չէ, որ հիմնուած լինի որեւէ կոնկրետ աղբիւրի վրայ:
- 30 Տե՛ս *FHG*, v. II, p. 495; *FGrHist*, Bd. III, S. 364-366:
- 31 Philo, *De Vita Mosis*, Philo in Ten Volumes, v. VI. With an English translation by F. H. Colson, Cambridge (Mass.), London, 1966 (*Loeb Classical Library*).
- 32 Տե՛ս ՄԽ, էջ 9, 13:
- 33 *Georgius Syncellus et Nicephorus Cp. (Corpus Scriptorum Historiae Byzantinae)*, t. I. Bonnae, 1829.
- 34 *ԵԺ*, մասն Ա, էջ 17-18:
- 35 «Բերոսոսը «Բաբելոնականք»-ի առաջին (գրքում) ասում է, որ ինքը ծնունդ է ֆիլիսոսի լոնում տարիներ ի վեր մեծ խնամքով պահում էին շատերի գրուածքները, որոնք բովանդակում էին աւելի քան տասնհինգ բիւր տարուայ ժամանակաշրջան: Այդ գրուածքները բովանդակում էին պատմութիւններ երկնքի եւ ծովի, արարչագործութեան եւ արքաների, եւ նրանց օրօք (կատարուած) գործերի մասին»: Տե՛ս նաեւ *FHG*, v. II, p. 496; *FGrHist*, Bd. III, S. 367-368: Հին յունարէն եւ միւս օտար լեզուներով բոլոր հատուածների թարգմանութիւնները մերն են:
- 36 Տե՛ս նաեւ *FHG*, v. II, p. 498; *FGrHist*, Bd. III, S. 367-368:
- 37 Ֆ. Յակոբին, հետեւեալով Ուիստոնների լատինարէն թարգմանութեանը (*Mosis Chorenensis Historiae Armenicae Libri III*, Latine verterunt, notisque illustrarunt Gulielmus et Georgius, Gul. Whistonii Filii, London, 1736), այստեղ փակա-

դեան, «Օտար անունների արտայայտումները լուսարան թարգմանություններում», *Աշտանակ (հայագիտական պարբերագիրք)*, Ա. Երևան, 1995, էջ 151-162:

92 Ռ. Թոմսոնը «Բերոսեանն Սիբիլայ»-ի վերաբերելի տարօրինակ կարծիք է յայտնում. «Մովսեսը «Սիբիլեան պատգամախոսություններից» մի քաղցրածք վերագրում է Բերոսոսին» (Moses Khorenats'i, p. 14): «Բերոսեանն Սիբիլայ» գնահատվում է «Բերոսոսի դուստր Սիբիլայ», ինչպես որ, օրինակ, «Երուանդեան Տիգրան» (I, 24) գնահատվում է «Երուանդի որդի Տիգրան», կամ «Նիմոս Բեդեան» (ԵՇ, Մասն Ա, էջ 91)՝ «Բեդի որդի Նիմոս» (δ Βήδου Νίμος): Թարգմանիչներն այս հատուածը սովորաբար ճիշտ են հասկացել (օրինակ՝ Ա. և Ժ.-Պ. Մահեմեդը, որոնք գրում են. "Ia Sibylle, fille de Bérose"). Եւ այդ Սիբիլեան իրօք, համաձայն աւանդութեան, համարուել է պատմագիր Բերոսոսի դուստրը (հմմտ. մ.թ. II դարի քրիստոնէայ հեղինակ Յուստինոսին վերագրուած «Խրատ հեթանոսներին» (*Cohortatio ad gentiles*) երկում (P. 34, E). „Ταύτην (τήν Σίβυλλαν) δὲ ἐκ Βαβυλωνος ὠρμηθεῖσθαι φασί, Βηρώσσου τοῦ τὴν Χαλδαϊκὴν Ἱστορίαν γράψσαντος θυγατέρα οὖσαν», – «Ասում են, որ այս Սիբիլեան Բաբելոնից էր սերում՝ լինելով «Քաղղէական պատմութիւնը» գրած Բերոսոսի դուստրը». տե՛ս նաեւ P. Schnabel, *Berosus*, S. 84-85): Պարզ չէ, թէ ինչից էլնելով է Թոմսոնը մասն եզրայանգման եկել: Սխալուել է նաեւ Սոս. Մալխասեանցը՝ իր թարգմանութեան ծանօթագրութիւններում գրելով, թէ Սիբիլեան համարուել է ոչ թէ պատմագիր Բերոսոսի, այլ ոմն «Բերոսի» դուստր (Մովսէս Խորենացի, էջ 262): Հետեւաբար պատճառ չկայ տարակուսելու, թէ «Բերոսեանն» որոշիչը Սիբիլեաներից մէկի վերաբերելի «այնքան էլ հասկանալի չէ» (Moses Khorenats'i, c. 220):

93 Հմմտ. *Oracula Sibyllina*, Recensuit A. Rzach, Vindobonae, 1891, p. 54-56:

94 ԵՇ, մասն Ա, էջ 46, 139:

95 Պատմութիւն Սեբեոսի՝ աշխատասիրութեամբ Գ. Վ. Արզաբեանի, Երևան, 1979, էջ 48:

96 Հ. Պ. Անանեան, *Սեբեոսի պատմութեան գրքի մասին քանի մը լուսարանութիւններ*, Վենետիկ, 1972, էջ 48-58:

97 Տե՛ս, օրինակ, A. Carrière, *Moïse de Khoren et les Généalogies patriarcales*, Paris, 1891, p. 46, որ տեղ հեղինակը եզրակացնում է, թէ Մովսէս Խորենացին եւ Մար Աբասը նոյն անձնատրոսութիւնն են:

98 Ն. Արոնցը նոյնիսկ գտնում էր, որ Մար Աբասից օգտուել է Պրոկոպիոս Կեսարացին. տե՛ս Н. Адонц, «Начальная история Армении у Себеоса в ее отношениях к трудам Моисея Хоренского и Фауста Византийского», *Византийский временник*, VIII (1901), 1-2, с. 94:

99 Տե՛ս Գ. Խ. Սարգսեան, *Մովսէս Խորենացու*

«Հայոց պատմութեան» ժամանակագրական համակարգը, Երևան, 1965, էջ 13-15, 128-129. նոյն, *Հեղինակական դարաշրջանի Հայաստանը եւ Մովսէս Խորենացին*, Երևան, 1966, էջ 82-83:

100 Տե՛ս Н. Я. Марр, «О начальной истории Армении Анонима», *Византийский временник*, I (1894), 2, с. 293-294; Я. А. Манандян, «Начальная история Армении» Мар-Абаса (к вопросу об источниках Себеоса, Моисея Хоренского и Проккопия Кесарийского), *Палестинский сборник*, 1956, 2 (64-65), с. 69-86b

101 Պատմութիւն Սեբեոսի, էջ 52:

102 «Ժամանակագիր» ասելով՝ ըստ երեսութիւն երկու հեղինակներն էլ ինքուրուրուրուր Մար Աբասին:

103 Տե՛ս F HG, v. III, p. 207; *FGrHist*, Bd. III A, S. 258-259; P. Schnabel, *Berosus*, S. 135:

104 Տե՛ս, օրինակ, *FHG*, v. III, p. 212, 213:

105 Տե՛ս, օրինակ, *FHG*, v. III, p. 214. „Ζαμβρόνης, Ἰαζόρης, Μαδώνης, Μαδιώνης, Ἰωσσοῦβακος, Σοῦος», որից լետոյ Պոլիսիստորը գրում է, թէ սրանք էլ ծնեցին որդիներ, եւ մանրամասն թուարկում է նրանց անունները:

106 Մասնատրուելու՝ նրա կիսաառասպելական «ազգաբանութիւնների» մասին մանրամասնօրէն տե՛ս P. Schnabel, *Berosus*, S. 185-213:

107 A. v. Gutschmid, "Über die Glaubwürdigkeit", S. 27-28.

108 *FGrHist*, Bd. II C, S. 298.

109 Տե՛ս *RE*, Bd. XI, s. v. Kephalion, Kol. 191-192 (Jacoby):

110 *FHG*, v. III, p. 627, f. 2.

111 Մովսէս Խորենացի, էջ 261:

112 Moïse de Khorène, p. 329.

113 V. Langlois, *Étude sur les sources de l'Histoire d'Arménie de Moïse de Khoren*, Paris, 1861, p. 317-318.

114 G. Traina, *Il complesso di Trimalcione (Moses Khorenac'i e le origini del pensiero storico armeno)*, Venezia, 1991, p. 53.

115 Զ. Տրալինա, «Մովսէս Խորենացիի «դասական» աւանդութիւնը Հայոց պատմութեան Ա գրքի 5-րդ գլուխին մէջ», Պատմա-բանասիրական հանդէս, 1992, 1, էջ 32:

116 G. Traina, "Materiali", p. 309-310.

117 Ա. Թոփչեան, «Խորենացու մի քանի աղբիւրների մասին», էջ 81-83:

118 ԵՇ, մասն Ա, էջ 93-94:

119 Տե՛ս նոյն տեղում:

120 Տե՛ս H. G. Liddel and R. Scott, *A Greek-English Lexicon*, Oxford, 1978, s.v. βασιλεύς (III.3):

121 Photius, *Bibliothèque*, Texte établi et traduit par René Henri, t. I-III, Paris, 1959-1962.

122 *Suidas*, Ed. G. Bernharby, Halle, 1853, s.v. Κεφαλιών. Փոսի «Գրադարանի» եւ «Սոփիստի» համապատասխան հատուածները տե՛ս նաեւ *FHG*, v. III, p. 623; *FGrHist*, Bd. II A, S. 436-437:

123 Տե՛ս F HG, v. III, p. 623; *FGrHist*, Bd. II A, S. 436:

124 Ազգաբանագիտական Պատմութիւն Հայոց՝ աշխատութեամբ Գ. Տէր-Մկրտչեան եւ Սոս. Կանայեանց, Տիֆլիս, 1909:

125 Եիշտ է վարուել Ա. Տէր-Ղեոնդեանը՝ «հրաման թագաւորաց»-ը թարգմանելով «թագաւորական հրաման»: Տե՛ս Ազգաբանագիտական Հայոց պատմութիւն, Աշխարհաբար թարգմանութիւնը եւ ծանօթագրութիւնները Ա. Տէր-Ղեոնդեանի, Երևան, 1983, էջ 13:

126 Ղազարայ Փարպեցոյ Պատմութիւն Հայոց եւ Թուրքիա առ Վահան Մամիկոնեան, Աշխատութեամբ Գ. Տէր-Մկրտչեան եւ Սոս. Մալխասեանց, Տիֆլիս, 1904:

127 Յովհաննոս Կաթողիկոսի *Դրասխանակերտոյ Պատմութիւն Հայոց*, Թիֆլիս, 1912, էջ 362-363:

128 *Նշ. հրատ.*, էջ 12, 16, 23, 69, 111, 131, 141, 166,

228:

129 ԵՇ, մասն Ա, էջ 91-92:

130 ԵՇ, մասն Ա, էջ 91, ճնթ. 4:

131 ԵՇ, մասն Ա, էջ 64:

132 ԵՇ, մասն Ա, էջ 84, 88, 199:

133 Մ. Ալեքեանը տողատակում մէջբերել է լուսարան հատուածները: Տե՛ս «Ժամանակագրութեան» նշում էջերում:

134 ԵՇ, մասն Ա, էջ 31-32:

135 ԵՇ, մասն Ա, էջ 41:

136 ԵՇ, մասն Ա, էջ 56:

137 ԵՇ, մասն Ա, էջ 41:

138 Ընդհանրապէս անտիկ ու քիզանդական որեւէ որիչ աղբիւրում այդպիսի տեղեկութիւն չկայ:

139 Moses Khorenats'i, p. 14.

140 Moses Khorenats'i, c. 220.